ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 4-ը Լիտվայի Հանրապետություն (մայրաքաղաք Վիլնյուս) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արևհատ Պողոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Լիտվայի Հանրապետություն՝ մայրաքաղաք Վիլնյուս, 2023թ. հուլիսի 30-ից օգոստոսի 4-ը

4. **Հրավիրող կողմը.**

Լիտվայի տրանսպորտային անվտանգության կառավարման մարմին

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

«Անվտանգության տրանսպորտային համակարգ Հայաստանում» ծրագրի 3-րդ փուլի ուսուցողական այցին մասնակցություն

6. **Քննարկված թեմաները.**

Ուսուցողական այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ Լիտվայի տրանսպորտային անվտանգության կառավարման մարմնի ընդհանուր գործունեությունը, ավտոմոբիլային տարնսպորտի միջազգային բեռնափոխադրումների լիցենզավորման գործընթացի իրավական գործընթացին և կարգավորումներին, գործնական իրականացմանը, բեռնափոխադրումների իրականացման թույլտվությունների տրամադրման համակարգին, տեխնիկական զննության կայանների գործունեությանը, տրանսպորտի բնագավառում տեսչական վերահսկողության իրականացմանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ուսուցողական այցի ընթացքում հանդիպումներ են իրականացվել Լիտվայի տրանսպորտային անվտանգության կառավարման մարմնի ղեկավարության և մասնագետների, Լիտվայի բեռնափոխադրումների ասոցիացիայի նախագահի հետ, ինչպես նաև ասոցիացիայի ուսումնական կենտրոնում ծանոթացել ենք

բեռնափոխադրումների և վտանգավոր բեռների տեղափոխման ուսուցման գործընթացին, այցելել ենք պրոֆեսիոնալ վարորդների “Draiveris” ուսումնական կենտորոն, ծանոթացել ուսումնական ծրագրերին և վարորդական վկայական ստանալու քննությունների թեստավորման կարգին: Տեղում ծանոթացել ենք տրանսպորտային տեսչական վերահսկողություն իրականացման գործընթացին, մասնավորապես հետևել ենք տրանսպորտային տեսուչների կողմից բեռնատար տրանսպորտային միջոցների վերահսկողության իրականացման գործառույթներին, պրոֆեսիոնալ վարորդների համար մեքենա վարելու և հանգստի ժամերի հսկողական գործընթացներին, բեռների տեղափոխման փաստաթղթերի օրինականության ստուգման, տախոգրաֆի ուսումնասիրությանը և այլն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության վերաբերյալ: Մասնավորապես Լիտվայի բեռնափոխադրումների ասոցիացիայի հետ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ տարանցիկ բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների համար վտանգավոր բեռների փոխադրման և պրոֆեսիոնալ վարորդների համար նախատեսված դասընթացներ իրականացնելու վերաբերյալբեռնափոխադր ող որոշումներ, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Սակայն Էստոնիային և Ֆինլանդիայի գործընկերները պատրաստակամություն են հայտնել ռազմավարական պլանավորման ոլորտի հետ առնչվող հարցերի դեպքում աջակցություն ցուցաբերելու հարցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ուսուցողական այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքներով, Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության կողմից մշակված «Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարություն» փաստաթղթի նախագծում կավելացվեն միջոցառումներ վտանգավոր բեռների տեղափոխման, վարորդների վերապատրաստման տրանսպորտային տեսչական մարմնի վերահսկողության իրականացման և վերջինիս համապատասխան սարքավորումներով հագեցված տրանսպորտային միջոցի հատկացման վերաբերյալ և այլն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

09.08.2023